ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/262

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 18.12.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.12.2020թ. թիվ 26/26-1/18730-2020 գրությամբ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 11.12.2020թ. թիվ 1/18-2/77854-2020 գրության հիման վրա, 15.12.2020թ. թիվ 26/26-1/18730-2020 գրությամբ նախաձեռնել է Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ «ՖԱՔՍԻՄԻԼԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.11.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնատող հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի ընտրված (հաղթող) մասնակից հայտարարել (ճանաչել) «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.12.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 19.11.2020թ. ընտրված մասնակից «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին ուղարկվել է պայմանագրի նախագիծը, որը պետք էր մինչև 03.12.2020թ. ներկայացվեր Պատվիրատուին /ներառյալ պայմանագրի ապահովումը/՝ ինչը սահմանված ժամկետում մասնակցի կողմից չի կատարվել:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից և Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի

կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքի վրա, որոնք էական նշանակություն ունեն «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը որոշելիս.

Ինչպես արդեն հայտնել ենք՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ «ՖԱՔՍԻՄԻԼԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ՊԱՀՊԱՆՄԱՆ» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն և ճանաչվել ընտրված (հաղթող) մասնակից:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.12.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն արձանագրել է, թե իբր 19.11.2020թ. ընտրված մասնակից «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ–ին ուղարկվել է պայմանագրի նախագիծը, որը պետք էր մինչև 03.12.2020թ. ներկայացվեր Պատվիրատուին /ներառյալ պայմանագրի ապահովումը/՝ ինչը սահմանված ժամկետում մասնակցի կողմից չի կատարվել և հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը՝ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից: Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ գնահատող հանձնաողովի կողմից «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի էլ. փոստի հասցեին Ընթացակարգի պայմանագրի նախագիծը չի ուղարկվել:

Այս պարագայում գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք քննարկել ստորև ներկայացվող փաստական հանգամանքի իրավաչափության հարցը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի էլ. փոստի հասցեին Ընթացակարգի պայմանագրի նախագիծը չի ուղարկվել:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով

նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Այսպիսով, Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը հստակ և սպառիչ սահմանում է այն բոլոր դեպքերը, երբ մասնակցի կողմից դրսևորած վարքագիծը կարող է դիտարկվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, դրանք են.

1. հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

2. որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող.

3. առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այսինքն՝ որպեսզի «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին վերագրվի գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, անհրաժեշտ էր, որպեսզի առկա լիներ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված որևիցե հիմքերից մեկը:

Փորձենք դիտարկել այդ հիմքերը առանձին-առանձին՝

Հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող:

Ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը հստակ ամրագրում է գնումներին մասնակցելու իրավունքը և սպառիչ թվարկում, թե գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունքից որ անձինք չեն օգտվում:

Մասնավորապես, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված

հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում առկա չէ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով և Ընթացակարգի հրավերով ամրագրված «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի մասնակցության իրավունքի սահմանափակման որևիցե մի հիմքը, ուստի և գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը չի կարող որակվել որպես իրականությանը չհամապատասխանող և այս հիմքով «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1)մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ ...:

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում որակավորման չափանիշների պահանջներին մասին հայտով «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտարարությունը չի կարող որակվել որպես իրականությանը չհամապատասխանող և այս հիմքով «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ներկայացված փաստերից և գնահատող հանձնաժողովի արձանագրություններից ակնհայտ է դառնում, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը: Ուստի և այս հիմքով «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին չի կարող վերագրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ի մի բերելով վերոհիշյալը՝ կարելի է փաստել, որ տվյալ դեպքում առկա չէ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ ինչպես երևում է վերոշարադրված վերլուծությունից՝ պայմանագրի նախագիծը չստանալը և հետևաբար այն չստորագրելը՝ չի կարող դիտարկվել որպես Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման թվարկված որևիցե հիմքերից մեկը:

Մինչդեռ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն երբեք չի հրաժարվել «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում իրեն վերապահված

պարտականություններից, ավելին armeps.am համակարգի միջոցով ստացված պայմանագիր կնքելու առաջարկի շնորհումը Ա/Ձ-ի կողմից ընդունվել է, իսկ արդյունքում ընդունելով շնորհումը և սպասելով պայմանագրի նախագծին /որը Ա/Ձ-ն չի ստացել/ արդյունքում՝ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն հայտնվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու վտանգի առջև:

Հատկանշական է նաև այն փաստը, որ նմանատիպ խնդիր առաջացել է նաև նույն ՀՀ ՊԵԿ-ի կարիքների համար հայտարարված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/13-2 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ևս, երբ նորից ընտրված մասնակցին զրկել են պայմանագիր կնքելու իրավունքից՝ այն հիմքով, որ ընտրված մասնակցին ուղարկվել է պայմանագրի նախագիծը, իսկ վերջինս սահմանված ժամկետում կնքված պայմանագիրը չի ներկայացրել Պատվիրատուին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Մասնակիցը խնդրել է Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/262 ընթացակարգի շրջանակներում 21.12.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է նիստը հետաձգել մինչև «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքով որոշում կայացնելը, միաժամանակ միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ընթացակարգով վիճարկվող խնդրի վերաբերյալ կատարել համապատասխան հարցում:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.12.2020թ. թիվ 1/18-2/77854-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով գնման ընթացակարգի

արդյունքում 10.11.2020թ-ին գնահատող հանձնաժողովի որոշմամբ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգով սահմանված անգործության ժամկետը լրանալուց հետո՝ 19.11.2020թ-ին Armeps էլեկտրոնային գնումների համակարգի (հետայսու նաև՝ Համակարգ) ոչ ավտոմատ ծանուցումներ բաժնի միջոցով Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Սահմանված ժամկետը լրացել է 03.12.2020թ-ին, որի ընթացքում ընտրված մասնակցի կողմից չի ստորագրվել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացվել պայմանագրի ապահովումը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով գործող օրենսդրությամբ գնահատող հանձնաժողովը որոշել է սահմանված պահանջները խախտելու հիմքով Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները՝ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/262 ընթացակարգի շրջանակներում 21.12.2020թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/262 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/262 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ֆաքսիմիլային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված

մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել վերջինիս՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3. Պատվիրատուն Համակարգի միջոցով 19.11.2020թ. ծանուցել է Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ 19.11.2020թ. Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Սահմանված ժամկետը լրացել է 03.12.2020թ., որի ընթացքում ընտրված մասնակցի կողմից չի ստորագրվել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացվել պայմանագրի ապահովումը, ուստի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և Ընթացակարգի հրավերի 8.20 ենթակետով, որոշել է զրկել վերջինիս պայմանագիր կնքելու իրավունքից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.12.2020թ. թիվ 26/26-1/18730-2020 և 22.12.2020թ. թիվ Ն/26-1/24774-2020 գրությունները և կից տրամադրված փաստաթղթերը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 11.12.2020թ. թիվ 1/18-2/77854-2020 գրությամբ ներկայացված փաստաթղթերը, Ընթացակարգի շրջանակներում Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:***

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. ***Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:*** Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ <u>10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում</u>***

<u>պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից</u>: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է շինարարական աշխատանքների գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տաս տոկոսին:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ֆաքսիմիլային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո ծանուցել վերջինիս՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Պատվիրատուն Համակարգի միջոցով 19.11.2020թ. ծանուցել է Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ 19.11.2020թ. Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Սահմանված ժամկետը լրացել է 03.12.2020թ., որի ընթացքում ընտրված մասնակցի կողմից չի ստորագրվել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացվել պայմանագրի ապահովումը, ուստի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և Ընթացակարգի հրավերի 8.20 ենթակետով, որոշել է զրկել վերջինիս պայմանագիր կնքելու իրավունքից:

Այսպիսով, արձանագրում եմ, որ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի ներկայացուցիչը գործի քննության նպատակով հրավիրված նիստի ընթացքում միջնորդել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին Ընթացակագով վիճարկվող խնդրի վերաբերյալ կատարել համապատասխան հարցում:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ բավարարելով վերջինիս միջնորդությունը, 18.12.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/18999-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով գործի քննության անհրաժեշտությունից ելնելով հայտնել՝ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից ճանաչված Ա/Ձ Անուշ Պետրոսյանին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.11.2020թ. ոչ ավտոմատ ծանուցում՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ, ուղարկվել է, թե՛ ոչ:

Ի պատասխան վերը նշված հարցման՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.12.2020թ. թիվ Ն/26-1/24774-2020 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ***Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ի՝ «armeps» համակարգում գրանցած ga-c@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 19/11/2020թ. ժամը 12:28-ին ուղարկվել է էլեկտրոնային ուղերձ նամակ***:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.12.2020թ. թիվ Ն/26-1/24774-2020 գրությամբ տրամադրել է նաև էլեկտրոնային ուղերձ նամակին կցված փաստաթղթերը, մասնավորապես՝ թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 պայմանագիրը և պայմանագիրը կնքելու առաջարկը հետևյալ բովանդակությամբ.

«Սույնով ծանուցում ենք, որ ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2020թ. թիվ 3 որոշմամբ Անուշ Պետրոսյան ԱՁ -ն ճանաչվել է որպես ընտրված մասնակից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, կից Ձեզ ենք ուղարկում N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով պայմանագրի նախագիծը, որը ընկերության հետ կարող է կնքվել ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով՝ որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու դեպքում:

Խնդրում ենք նշված հրավերով սահմանված ժամկետներում ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները և Ձեր կողմից ստորագրված պայմանագրի օրինակները, կամ Ձեր կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները»:

Այսպիսով՝ վերոնշվածով փաստվում է, որ Պատվիրատուի կողմից 19.11.2020թ. սահմանված կարգով Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին ներկայացվել են պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագիրը, միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ բացառությամբ սույն ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից դիրքորոշմամբ ստորև հայտնածի.

«Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի էլ. փոստի հասցեին Ընթացակարգի պայմանագրի նախագիծը չի ուղարկվել:»՝ որևէ հիմնավորում, ապացույց չի ներկայացվել:

Այսպիսով, Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ ***<u>մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին</u>***:

Ընդ որում՝ ***<u>Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն</u>*** Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացվող Հավելված 1-ի՝ ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարության, 1-ին կետով ***<u>հայտնել և հավաստել է, որ</u>***՝ բավարարում է ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության պահանջներին ***<u>և պարտավորվում</u>***

է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ ***պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:***

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպիսով, վերը նշված կարգավորումները հստակ ցույց են տալիս, որ մասնակիցը՝ ընտրված մասնակից ճանաչվելով, պարտավորվում է Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում ներկայացնելու պայմանագրի և որակավորման ապահովումներ, չներկայացնելու դեպքում վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, ընդ որում՝ որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին վերջինս հայտնել և հավաստել է իր կողմից հայտով ներկայացվող Հավելված 1-ի՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարության, 1-ին կետով հաստատված հավաստմամբ:

Կարգի 32-րդ կետի կետի 19-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ ***մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը*** կամ ***ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին***

<u>մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:</u>

Այսպիսով, գործում եղած փաստերը՝ համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.12.2020թ. թիվ Ն/26-1/24774-2020 գրությունը՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն 19.11.2020թ. Մասնակցին ուղարկված ծանուցմամբ հայտնել է, որ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով գնման գործընթացի արդյունքներով ճանաչվել է ընտրված մասնակից և որ ուղարկվում է պայմանագրի նախագիծը, որը վերջինիս հետ կարող է կնքվել հրավերով սահմանված կարգով՝ որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու դեպքում, մինչդեռ արձանագրում եմ, որ Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, այն է՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն չի ստորագրել պայմանագիրը և ներկայացրել ապահովումը, որի հետևանքով զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նման պայմաններում, գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում և առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից դիրքորոշմամբ ներկայացված այն պնդմանը, որ առկա չէ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված հիմքերից և ոչ մեկը Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին վերագրելու գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում և որ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը հստակ և սպառիչ սահմանում է այն բոլոր դեպքերը, երբ մասնակցի կողմից դրսևորած վարքագիծը կարող է դիտարկվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով</u>***:

Մասնակցի կողմից դիրքորոշմամբ վկայակոչված Կարգի 32-րդ կետի 20-րդ կետում, *այն է՝ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ **<u>եթե</u>** մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում*, «ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 10.10.2019թ.-ի (ուժի մեջ է մտել 02.11.2019) թիվ ***<u>1422-Ն որոշմամբ</u>*** կատարվել է փոփոխություն և ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2020/12 ծածկագրով գնման ընթացակարգի վրա, որը կազմակերպվել է 24.10.2020թ. արդեն իսկ տարածվել է 02.11.2019թ. ուժի մեջ մտած 1422-Ն որոշման պահանջները, որով սահմանվել է, *որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ **<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում</u>**:*

Այսպիսով, Կարգի գործող վերը նշված կետով որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում է դիտարկվում նաև եթե ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը:

Ընդ որում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:</u>***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.12.2020թ. թիվ 26/26-1/18730-2020 գրությամբ Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Անուշ Պետրոսյան Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**